## Music

| ORIGINAL | TRANSLATION |
|---|---|
| Davis, Miles (1926-1991), American trumpet player and bandleader, one of the most innovative, influential, and respected figures in the history of jazz . Davis was a leading figure in the bebop style of jazz and in combining styles of jazz and rock music. As a player, he was a master improviser (one who invents melodies while playing; see Improvisation) who played seemingly simple melodies with great subtlety and expressiveness. As a combo (small ensemble) leader, he assembled classic groups and allowed them the freedom to experiment and develop. The recordings of Davis and his groups have been imitated by musicians around the world. | Դեյվիս, Մայլս (1926-1991) ամերիկացի շեփորահար և նվագախմբի ղեկավար, ջազի պատմության մեջ ամենանորարար, ազդեցիկ և հարգված դեմքերից մեկը: Դեյվիսը ջազային բիբոպ ոճի և ջազի և ռոքի համակցված ոճերի ստեղծման առաջնակարգ ներկայացուցիչներից է: Որպես կատարող՝ նա բարձրակարգ իմպրովիզատոր էր, որի առաջին հայացքից պարզ մեղեդիները աչքի էին ընկնում նրբությամբ և արտահայտչականությամբ: Որպես կամբոյի (փոքր նվագախմբերի) ղեկավար՝ նա դասական խմբեր էր հավաքում և նրանց փորձարկումներ կատարելու և զարգանալու ազատություն էր տալիս: Դեյվիսի և նրա խմբերի կատարած ձայնագրությունները ընդօրինակման առարկա են դարձել ողջ աշխարհի երաժիշտների համար: |
| Born Miles Dewey Davis III in Alton, Illinois, he grew up in East Saint Louis, Illinois. Davis began music lessons after receiving a trumpet on his 13th birthday from his father. Two years later he joined the musicians' union and began playing with a local band on weekends. About this time he met trumpeter Clark Terry, who helped and encouraged him. In 1944, after graduating from high school, he went to New York City to study classical music at the Juilliard School of Music. While there, he also began playing with alto saxophonist Charlie Parker, trumpeter Dizzy Gillespie, and other pioneers of the new jazz style known as bebop. In 1945, at the age of 19, he began playing in a combo led by Parker. The recordings he made with Parker that year demonstrate that Davis had excellent tone but an immature style of improvising. However, he refined and improved his style of improvising during the next few years with Parker. | Մայլս Դյուի Դեյվիս III-ը ծնվել է Իլինոյս նահանգի Ալտոն քաղաքում: Մանկությունն անցել է Իլինոյսի Արևելյան Սեյնթ Լյուիսում: Մայլսը երաժշտության դասեր է առնում 13 տարեկանից, երբ հայրը նրա ծնունդին շեփոր է նվիրում: Երկու տարի անց նա միանում է երաժիշտների միությանը և շաբաթ, կիրակի օրերին նվագում տեղական նվագախմբում: Մոտավորապես այս ժամանակ է, որ նա հանդիպում է սաքսոֆոնիստ Քլարք Թերիին, որը նրան օգնում է և խրախուսում: 1944 թ.՝ դպրոցն ավարտելուց հետո, նա մեկնում է Նյու Յորք և ընդունվում Ջուլիարդի երաժշտական դպրոց՝ դասական երաժշտություն ուսանելու: Նյու Յորքում նա նվագում է սաքսոֆոնահար Չարլի Փարքերի, շեփորահար Դիզի Գիլեսպիի և բիբոպ կոչվող նոր ջազային ոճի այլ ռահվիրաների հետ: 1945 թ.՝ 19 տարեկան հասակում նա նվագում է Փարքերի ղեկավարած կոմբոյում: Այդ տարի Փարքերի հետ կատարած նրա ձայնագրություններից երևում է, որ նա հրաշալի ձայնային որակ ունի, սակայն որպես իմպրովիզատոր դեռ հասուն չէ: Սակայն Փարքերի հետ անցկացրած հաջորդ մի քանի տարիների ընթացքում նա հղկում և կատարելագործում է իր իմպրովիզացիոն ոճը: |
| In 1949 and 1950, Davis made a series of recordings with a nine-person group that appeared on the album The Birth of the Cool (1950). The terms cool and cool jazz referred to a slower, more subdued style of bebop. By the mid-1950s Davis had developed one of the most distinctive styles in all of jazz. Unlike Gillespie, the first great bebop trumpeter, Davis preferred simple, lyrical melodies to speedy, flashy ones. Using delicate pitch-bending (a slight lowering or raising of a note) and a light vibrato (a gentle and regular wavering of pitch), he created a beautiful and expressive style. Often he used the harmon mute (a metal mute) to get a pinched, quiet sound. | 1949-ին և 1950-ին Դեյվիսը մի շարք ձայնագրություններ է կատարում ինը հոգանոց նվագախմբի հետ, որը լույս է տեսնում «Քուլի ծնունդը» (The Birth of the Cool) ալբոմով: «Քուլ» և «քուլ ջազ» բառերը բնութագրում էին բիբոպի ավելի դանդաղ և զսպված տեսակը: 1950-ականների կեսերին Դեյվիսն արդեն ստեղծել էր ջազի պատմության մեջ ամենայուրահատուկ ոճերից մեկը: Նրբաճաշակ տոնային ելևէջների (նոտայի թեթևակի բարձրացում և իջեցում) և թեթև վիբրատոյի (տոնի թեթևակի պարբերական տատանում) օգնությամբ նրան հաջողվեց հրաշալի և արտահայտիչ ոճ ստեղծել: Ճնշված, խլացված ձայն ստանալու համար նա հաճախ օգտվում էր մեղմոցից (մետաղական սուրդինա): |


**Henrik Pipoyan, Freelance Translator**
19/1 Vagharshyan street, # 15, Yerevan, 375012, Armenia
**Tel./Fax:** +374 (1) 22-35-60, **E-mail:** Henrik@Pipoyan.com
**Online Resume:** www.pipoyan.com/trans/